

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Փ

ՀՐԱՇԱԼԻՔ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ



Իի-ԵՈՐՔ Հերալտի խմբագրաց մին իր Պ. Էտիսընի
հետ ունեցած մէկ հետաքրքրական խօսակցութիւնն
հրատարակեր է։ Այս խօսակցութեան ամենակարևո-
րագոյն մասերը մենք կը քաղենք, ենթադրելով որ ըն-
թերցողք «Մէնթ-ֆարքի կախարդին» (այսպէս կը կոչեն զիտիսըն
Ամերիկացիք) իր աշխատութեանց վրայ տուած մանրամասն տեղե-
կութեանց կը փափագին։

* *

Այժմ Էտիսըն կը գտնուի 'ի ֆարիզ՝ ուր եկեր է աշխարհանդէսն
այցելելու և մասնաւորապէս էյֆէլի աշտարակը։ Բարեկամի մը հետ
երեկոյեան գէմ կառըով երկայն շրջագոյութիւն մ'ընելէն վերջը՝
երբ գարձաւ իր բնակարանն, ամենամեծ ճշդութեամբ իսկոյն քաղա-
քին յատակագիծն ակսաւ ծրագրել։ Երբ իր բարեկամը կը զարմա-
նար այս հրաշալի գործին վրայ՝ էտիսըն ըստաւ իրեն։

— Քիչ մը ուշագրութեամբ դիտելէս վերջը՝ կրնամ և իցէ անծա-
նօթ քաղաքի մը յատակագիծն ծրագրել գլխոյս մէջ։ Նոյն բանը նաև
մեքենայից վրայ փորձեր եմ։ յետ դիտելոյս մեքենայ մը՝ երբ գար-
ձեալ կ'ուզեմ զայն յիշել, բաւական է աշքս գոցեմ, և այն ատեն ա-
մենամեծ ճշդութեամբ և իր ամէն մասամբ մեքենան իմ ուղեղիս մէջ
կը պատկերանայ։ Իրեւ թէ աշքիս առջև ըլլար մեքենան, կ'սկսի շար-
ժիլ և գործել։ միթէ մեծ դիւրութիւն և շահ չէ։ բայց ընդհակա-
ռակն, այնչափ զիւրութեամբ չիմ կրնար յիշել իմ տեսած ան-
ձանց պատկերները։ սակայն կրնայ ըլլալ որ այս ալ իմ անուշագիր
ըլլալուս արդիւնքն է։

* *

Գիտութեան սահմանին մէջ թեակոխելով Նիւ-Եօրք Հերալտի խմբագիրը հարցուց էտիսիրնի, թէ արդեզք ճիշդ է ինչպէս ընդհան-ըապէս կը կարծուի, որ անձ մը՝ ի Նիւ-Եօրք կեցած կարենայ տես-նել՚ի Փարիզ իւր բարեկամը։

— Զեմ գիտեր թէ արդեզք մարդկութեան համար օգտակար գիւտ մէ այս, ըստ Պ. Էտիսիրն ժպտելով։ Բայց ճիշդ խօսելով, կ'աշխա-տիմ գտնել գիւտ մը, որով անձ մը բաւական հետառորութեամբ կե-ցած հեռախօս գործւոյն ձեռքով իր բարեկամին հետ խօսած ժամանակ՝ կարենայ միանգամայն բաւական ատեն իրապէս տեսնել զի՞քը։ Այս գիւտն օգտակար և գործադրելի է, և ես ամեննեին ար-գելք մը շեմ տեսներ այս գիւտին իրականութեան։ Կերք գառնամը յի-մերիկա առաջին գործս պիտի ըլլայ այս գործիքէն մէկ հաս-տատելիմ և հեռախօսութեան արուեստանոցաց մէջ։ Արդէն հազար ոտք հեռաւորութեամբ պատկերաց վրայ ըրած զանազան փորձե-րուս շատ գոհ եմ, վասնզի գոհացուցիչ հետևանքներ ընդունեցայ այս առաջին փորձերէն։ Սակայն անկարելի և հակասական է երազեն տեսնել բարեկամը մը՝ ի Նիւ-Եօրքէ մինչև ՚ի Փարիզ։ Եթէ ուրիշ զըժ-ւարութիւնք ալ շըլլային, նոյն իսկ երկրիս բոլորակ ձեն այս ենթա-զըութիւնը անկարելի կ'ընէ։

* *

Զայնախօս գործւոյն համար Խմբագիրը հարցուց, որ արդեզք այս գործին իր կատարելութեան վերջին ձագը հասե՞ր է։

Կարծեմ, զրեթէ, — պատասխանեց հաշվակատոր ելեկտրագէտն — ընդունեցան այս կատարելութիւնը իմ արուեստանոցաց մէջ շինուած վերջին գործիքները։ Գիտեմ որ վաճառականութեան մէջ գործա-ծուած սովորական ձայնախօս գործին՝ իմ առանձնական փորձերուս մէջ գործածած մանրամասն և կատարեալ հանգամանքները չունին։ Իմ ունեցած այս ամենակատարեալ գործիքներով՝ ճառախօսի մը արտասանած բառերը այնպիսի հնչուն և փայլուն կերպով կը զը-րեմ, որ յօժք բաղմաթիւ ունկնդրաց կրնամը լեելի ընել տալ։

— Վերջին աշխատութիւնս և կատարելոգործութիւնն եղաւ հա-գագային տառից հնչումը՝ որ ձայնագրին տկար մասը կը կազմէ. եօ-թըն ամիս անընդհատ ամ. որ տասննեռութ, քասն ժամ, միայն մի բա-ռի վրայ աշխատեցայ (Specia). Ես ձայնագրին Specia, specia կ'ըսէի, և գործիքն ինձ Pecia, pecia կը կրկնէր և այլ բան մը չէի կարող ը-նել. բարկութենէս և աշխատութենէս յիմարիլս կուգար. սակայն հաստատուն կեցայ, մինչև որ վերջապէս յախողցուցի և այժմ կրնաս ձայնագրի գործւոյն մը առջն կարգալ օրագրէ մը հազար բառ, մէկ վայրկենի մէջ հարիւր յիսուն բառի արագութեամբ, և յետոյ գոր-ծիքը կը կրկնէ զայն ձեզ առանց փոքր մասնիկ մ"իսկ թողլու։

* * *

Դեռ ուրիշ ինչ նոր ելեկտրական գիւտեր ալ կրնան ըլլալ:

— Դժուար է այս բանս հաստատել և որոշել. սակայն թերևս օր մը մեր առջնը պարզուին քնութեան ամենամեծ գաղտնիքներն: Օդաչու ճանապարհորդութեան գժուարատիննիուն խնդիրը լուծելու համար միշտ բանի մը կ'սպասեմ, որ կարենայ օգնել ինձ այս հանգոյցը քակելու համար. այս նպատակաւ շատ աշխատեցայ, այլ արդ դինք մը շտեսայ. բայց այս գիւտը գեռ գտած ուրիշ բազմաթիւ գիւտեր ալ պիտի գտնուի. սակայն միւսն ալ պիտի գտնուի:

Այս խօսքերս ըստած ժամանակ Պ. Էտիւլն յօնքերն ամփոփած կարծես թէ օգոյ մէջ անտեսանելի բան մը կը դիտէր.

— Ապահով եղիր, աւելցուց, որ կազով աշխատողներն ի գուրիենց ժամանակը կը կորսնցնեն, ոչ երբեք պիտի յաջողին. ահաւասիկ օգապարիի գնդոց ուղղութեան խնդրոյն լուծումը. սոտիսեալ ենք միշտ օդէն աւելի ծանր մերենայ մը ՚ի գործ ածել, և ահա ոչիշ զօրուրիշն մը պէտք է որ այս մերենան բարձրացնէ. գժուարութիւնը ահա այս «գօրութիւնը» գտնալուն մէջն է. և թերես այս օրերուս մէջ ես գըտնեմ՝ զայն... ո՞ գիտէ...:

Ասուպի մը անկորւմն ՚ի Շուէտ. — Յիրաւի հազուագիւտրան մը պիտի լինի, եթէ կարողանան սառուցիւ նշանակել ասուպի մը անկ. ման վայրկեանը և նորա պայմանները՝ յորս կը կատարուի այս երեսով:

Սոյն բանս մերձակայ օրերուս մէջ դիպեցաւ ՚ի Շուէտ, յորում այս մարմիններէն մին տարւոյս Ապիլի նին վար ինկաւ: Անկորւմն եղաւ կարմիր լուսոյ փայլմամբ և որոտման նման շառաչինով: Այս ասուպս կը կըռէ և հազարագրամ. Յօ հարիւրորդամէդը խորութեամբ փոս մը փորեց գետնին վրայ՝ ինկած տեղը, այլ գուրս ցատքեց և հողին վերայ գտնուեցաւ փոսին ճեղքին մօտ:

Պարոն Նորուանքիուլ առաւ զայն լիորհումի թանգարանին համար, ուր առաջին անգամ զայն քննեցին: իւր ընդհանուր գոյնն է թուխ, մինչդեռ ներքին մասունքն տժգոյն և մոխրագոյն են: Նորա զանգուածն թուի թէ մանգանէկդ կազմուած է, յորում կը նշմարուին դեղին և կանաչ մետաղաց մասնիկներ. իւր ջերմութեան աստիւ ճանն հասաւ մինչեւ ՚ի կարմրութիւն:

Զիոնց վրայէն ձանձերը հեռացնելու հնարք.

10. Նախ, պէտք է սակաւիկ ինչ զիոյ (cade) իւզով շփել զլուխը և կենդանւոյն զգայուն մասերը: Այս իւզս կը գտնուի ամէն գեղագաճառաց քով: